

**Auntie Rosa**  
Cafe Restaurant

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՍՏԻՆ  
ՄԱՍՆՈՒՆՆԵՐ

Lebanon - Al Saoud Street, Tel: 04/544122 - 03/333778 - 03/860186

# ԱԶՏԱԿ

## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 76Գ՝ ՏԱՐԻ, ԹԻԻ 78 (21420) ՈՒՐԱԿԱԾ, 13 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷՁ

ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆ՝  
ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՆԱԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԱՌԱՋՆԱԿԵՐԹԸ՝  
Ը. Յ. Դ. ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԷՁ 4

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍԵ ԳՈՒՄԱՐՈՒԹՅԱԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Երեկ գումարուեցաւ Հայաստանի նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը, որուն ներկայ էին Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս եւ վարչապետ Անդրանիկ Մարգարեան:

Քեր քուէարկեց 92 պատգամաւոր, դէմ՝ 6 պատգամաւոր, իսկ 5 քուէարկութիւն նկատուեցաւ անվաւեր: Քուէարկութեան արդիւնքին հիման վրայ Ազգային ժողովի նախագահ ընտրուեցաւ Արթուր Պաղտասարեան:

**ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ**

Յետմիջօրէին տեղի ունեցաւ Ազգային ժողովի նախագահի տեղակալներու ընտրութիւնը: Ազգային ժողովի փոխ նախագահ ընտրուեցաւ Վահան Յովհաննիսեան (Հ. Յ. Դ.) եւ Տիգրան Թորոսեան (ՀՀԿ):

Իր խօսքին մէջ, ընկ. Վահան Յովհաննիսեան անհրաժեշտ նկատեց, որ թէ՛ համաձայնական դաշինքին մաս կազմող պատգամաւորները, թէ՛ խորհրդարանին մէջ ներկայացուած ընդդիմադիր ուժերը ամէն ճիգ ի գործ դնեն երկրին մէջ քաղաքական առողջ մթնոլորտ ստեղծելու համար:

«Անցնող կէս տարւան ընթացքին, իրարու յաջորդող ընտրութիւնները դժբախտաբար երկրին ներքին կայունութիւնը չամրապնդեցին, այն ամրապնդումը, զոր կը



ԸՆԿ. Վահան Յովհաննիսեան՝ Ազգային ժողովի ամպիոնէն կ'արտասանէ իր խօսքը

պահանջէին նաեւ այսօր բացակայ պատգամաւորները», յայտնեց ընկ. Յովհաննիսեան ակնարկելով «Արխրութիւն» դաշինքի եւ «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան պատգամաւորներուն, որոնք չմասնակցեցան երկրուան նիստին:

**ՄՏՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Ընտրուեցան նաեւ խորհրդարանական

վեց մշտական յանձնաժողովներու ղեկավարները:

Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ եւ «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան պատգամաւորներուն, որոնք չմասնակցեցին ընկ. Արմէն Ռուստամեան: Նշենք, որ նախկին Ազգային

ժողովին մէջ Ռուստամեան այս յանձնաժողովին փոխ նախագահն էր: Ներկայացրելով յանձնաժողովի հետագայ գործունէութիւնը, ընկ. Ռուստամեան դիտել տուաւ, որ արտաքին քաղաքականութիւնը այն մարպէն է, որ նախ եւ առաջ միասնականու-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ**

Հայաստանի կառավարութեան նոր կազմը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Վարչապետ՝ Անդրանիկ Մարգարեան (ՀՀԿ), արտաքին գործոց նախարար՝ Վարդան Օսկանեան (անկուսակցական), արդարադատութեան նախարար՝ Դաւիթ Յարութիւնեան (անկուսակցական), պաշտպանութեան նախարար՝ Սերժ Սարգսեան (անկուսակցական), գիտատնտեսութեան նախարար՝ Դաւիթ Լոբեան (Հ. Յ. Դ.), ընկերային ապահովութեան նախարար՝ Ադուան Վարդանեան (Հ. Յ. Դ.), առողջապահութեան նախարար՝ Նորայր Դաւիթեան (Հ. Յ. Դ.), մշակոյթի եւ մարմնամարզի նախարար՝ Թամար Պողոսեան («Օրինաց Երկիր»), կրթութեան եւ գիտութեան նախարար՝ Սերգէյ Երիցեան («Օրինաց Երկիր»), քաղաքաշինութեան նախարար՝ Արա Արամեան («Օրինաց Երկիր»), տարածքային կառավարման նախարար՝ Յովիկ Արարահմեան (ՀՀԿ), էլեկտրոնային նախարար՝ Վարդան Խաչատրեան (ՀՀԿ), հաղորդակցութեան եւ փոխադրամիջոցներու նախարար՝ Անդրանիկ Մանուկեան (ՀՀԿ), առեւտրի եւ արդիւնաբերութեան նախարար՝ Կարէն Ճշմարիտեան (ՀՀԿ), բնապահպանութեան նախարար՝ Վարդան Ավապեան (ՀՀԿ), ուժանիթի նախարար՝ Արմէն Մովսիսեան (ՀՀԿ) եւ աշխատակազմի նախարար՝ Մանուկ Թոփուպեան (ՀՀԿ):

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ ՌՈՒՄԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՍԱՆ ՄԷՋ**

Երեկ, Պէյրութի ռուսական դեսպանատան մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, Ռուսիոյ Ազգային Տօնին առիթով:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը մը, գլխաւորութեամբ ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեանի, ներկայ գտնուեցաւ եւ այս առիթով շնորհաւորեց դեսպան Պորիս Պոլոբինը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՎԵՑ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՕՆԸ**

Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ներկայութեամբ, նորանշանակ նախարարներ երէկ ստանձնեցին իրենց պաշտօնները:

Ընկերային Ապահովութեան նախարարութեան կեդրոնատեղիին մէջ վարչապետ Մարգարեան ներկայացրելով ընկ. Ադուան Վարդանեանը՝ զայն ծանօթացուց իր բնական ընկերային խնդիրներու քաղաքական մարզը, որուն ներկայութեամբ երկրին ամենախթին մարզերէն մէկուն, մէջ՝ կ'օգնէ ժողովուրդին բարօրութեան միտող ծրագիրներու իրագործման:

Իր կարգին, նախարար Վարդանեան դիտել տուաւ,

թիւն կ'ենթադրէ: Ան նշեց, որ պէտք է պահպանել եղած ձեռքբերումները եւ կուտակուած փորձառութեան հիման վրայ իրականացնել մշակուած ծրագիրները:

Պաշտպանութեան, անվտանգութեան եւ ներքին գործոց յանձնաժողովի նախագահ ընտրուեցաւ «Օրինաց Երկիր» կուսակցութեան փոխ նախագահ Միւր Շահգեղեան:

Պետաիրաւական յանձնաժողովի նախագահ ընտրուեցաւ մեծամասնական կարգով ընտրուած Ռաֆիկ Պետրոսեան, որ մաս կը կազմէ երէկ ձեւաւորուած եւ 17 պատգամաւորներ համախմբող խորհրդարանական «Ժողովրդական Պատգամաւոր» խմբակցութեան:

Ընկերային, առողջապահութեան եւ բնապահպանութեան ծունեայ Ազգային ժողովի եւ արդիւնաբերական յանձնաժողովի նախագահ ընտրուեցաւ «Օրինաց Երկիր» կուսակցութեան ներկայացուցիչ Գագիկ Մխիթարեան:

Յինանսավարկային, պիտակի եւ տնտեսական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ ընտրուեցաւ Հանրապետական Կուսակցութեան ներկայացուցիչ Գագիկ Մխիթարեան:

Իսկ գիտութեան, կրթութեան եւ մշակութի հարցերու մշտական յանձնաժողովի

նախագահ ընտրուեցաւ մեծամասնական կարգով ընտրուած Հրանուշ Յակոբեան:

**ՆԱԽԱԳԱՀ ԲՈՂՈՒՆԻ ՈՂՁՈՅՆԻ ԽՈՍՔԸ**

Երէկուան նիստերուն աւարտին, Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան նշեց, որ նիստերուն ընթացքին կատարուած ընտրութիւնները ընթացան բնական հեղաշրջան, կազմակերպուած եւ խաղաղ: «Սակայն կատարուած եւ 17 պատգամաւորներ համախմբող խորհրդարանական «Ժողովրդական Պատգամաւոր» խմբակցութեան նիստին նախորդած էին բնական երկար քառակուսիքներ, նշեց Քոչարեան: Ան յորս յայտնեց, որ յառաջիկայ չորս տարուան ընթացքին կարելի կ'ըլլայ ունենայ գործունեայ Ազգային ժողովի եւ արդիւնաբերական յանձնաժողովի նախագահ ընտրուեցաւ «Օրինաց Երկիր» կուսակցութեան ներկայացուցիչ Գագիկ Մխիթարեան:

Ընդդիմութիւնը ներքաղաքական դաշտի անհրաժեշտ մասնիկն է, սակայն դժբախտաբար անոնք այսօր չմասնակցեցան նիստերուն», ընդգծեց նախագահ Քոչարեան: Ան խորհրդարանականներուն մաղթեց արդիւնաբերական եւ հետեւողական գործունէութիւն:

**ԸՆԿ. ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ՝ Հ. Յ. Դ. ՊԱՏԳԱՍՏԻՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

Հ. Յ. Դ. «Սիմոն Վրացեան» կեդրոնին մէջ երէկ տեղի ունեցաւ Հայաստանի Ազգային ժողովի Հ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան անդրանիկ նիստը: Նիստին ընթացքին Հ. Յ. Դ. խմբակցութեան նախագահ ընտրուեցաւ կրթութեան եւ գիտութեան նախկին նախարար ընկ. Լեւոն Մկրտչեան: Խմբակցութեան քարտուղար ընտրուեցաւ ընկ. Հրայր Կարապետեան:

Լեւոն Մկրտչեան պատմական գիտութիւններու թեկնածու է: Կը դասաւանդէ Երեւանի պետական համալսարանին մէջ: 1993էն 1995 եղած է Հ. Յ. Դ. Հայաստանի մարմինի քաղաքական դիւանի անդամ, իսկ 1995էն 1996՝ Հ. Յ. Դ. Հայաստանի պատասխանատու մարմինի անդամ:

Հրայր Կարապետեան 1998էն 2003 վարած է Արագածոտնի մարզպետի պաշտօնը: 1990էն 1998 եղած է Հ. Յ. Դ. Հայաստանի Կեդրոնական Կոմիտէի, ապա՝ Գերագոյն Մարմինի անդամ:

**ՍԱՐԴԱՐԱՊՈՍ ԱՎՈՒՄԲԻՆ ՄԷՋ**

**Հ. Յ. Դ. ԵՒ ՀԸԶՊԱՆԼԱ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՆԵՐԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ**



Հրպայլայի պատուիրակութիւնը մը, գլխաւորութեամբ կազմակերպութեան քաղաքական խորհրդի նախագահ Իպրահիմ Ամին Սայիտի, երէկ առաւօտեան ժամը 11:30ին այցելեց Հ. Յ. Դ. Մարդարապետ ակումբ, ուր ընդունուեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի կողմէ:

Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան իր խօսքին մէջ ըսաւ, որ այցելութիւնը կ'ամրապնդէ երկու կուսակցութիւններու յարաբերութիւնը: Քննարկուեցան ներլիբանանեան եւ շրջանային տարբեր հարցեր: Ընկ. ներկայացուցիչը շեշտեց, որ շրջանային ներկայ իրավիճակին ու պայմաններուն մէջ աւելի քան երբեք անհրաժեշտ է ներքին միակամութիւնը: Ան նկատել տուաւ, որ լիբանանեան կուսակցութիւններուն դերակատարութիւնը քաղաքական, տնտեսական թէ ընկերային մարզերուն մէջ պէտք է ըլլայ շատ աւելի տիրական:

Իր կարգին, Հրպայլայի ղեկավարը հաւաստեց, որ երկու կուսակցութիւններուն միջեւ յարաբերութիւնները պիտի շարունակուին, նշելով, որ այս այցելութեան նպատակն է ապահովել ազգային միասնական կեցուածք շրջանային հարցերուն նկատմամբ: Իպրահիմ Սայիտ եւս շեշտեց անհրաժեշտութիւնը կուսակցութեանց դերակատարութեան ամրապնդման՝ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ:

### ԼԻՔԱՆԱՆ ՊԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿԵ ԱՀՎԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՍ ԱՐՇԱԲԸ

ԿԸՆԵ ՆԱԽԱԳԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ գործ. Էմիլ Լախուրի երկվ պերահասարակաց, որ Լիբանանի միջին շարունակել իր արշար ահաբեկչութեան, աղօթիմի գաղթականութեան, թմրեցուցիչի մաքսանկեցութեան եւ ինքնաշարժի գողութեան դէմ:

Նախագահ Լախուրի այս յայտարարութիւնները կարգադրեց Պատրիարքի մէջ, Մոնթրէլ եւ միջինարեւելեան երկիրներուն հետ յարաբերութեանց Եւրոյաբնորոգի յանձնախումբը ընդունելու ընթացքին:

Նախագահ Լախուրի նկատմամբ փուս, որ հարկ է իրականացնել լիբանանեւրոպական գործակցութեան համաձայնագրի կէտերը Լիբանանը դարձնելու համար Արեւելքի եւ Արեւմուտքի միջին կամուրջը:

Հանդիպումի մերկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան ներկայացուցիչ Փաթրիք Ռեմո:

Նախագահ Լախուրի երկվ ընդունեց նաեւ օդակայան նախարար Ալօրէլ Ռահիմ Մըրապը, որուն հետ ընմարկեց ներլիբանանեան եւ շրջանային զարգացումները, ինչդէս նաեւ յառաջիկայ շաբթուան ընթացքին կառավարութեան նիստին ընմարկուելիք օրակարգը եւ քրքածրարը:

Նախագահ Լախուրի այցելեց երեսփոխան Արքամ Շըհալէյ, որ ըսաւ, թէ նախագահը կրնայ հակակշիռի փակ առեւել կենտրոնի թղթածրարը, վերջ փախով քարահայրման վայրերու թղթածրարին դապրձառով սպեղծուած բանավէճերուն:

Նախագահ Լախուրի ընդունեց երեսփոխաններ Ղասսան Աշրարը եւ Մահմուդ Աղոյ Համպանը, որոնք ներկայացուցին Մեքնի եւ Պերպայի կարիքները:

#### «Ա.Չ.Գ.Ա.Կ»-ի

#### ՀԵՌԱԶՄՆԱԿՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ա.Չ.Գ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

#### ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԶ

Հայաստանի հանրապետութեան մարմնամարզի նախարարութեան կազմակերպած Համահայկական Յորհորդուն առթող, շրջապոստ դէպի Երեւան, Յոլկաձոր - Սեւան 15ԷՆ 29 Օգոստոս: Յատուկ զեղչեր պիտի տրուին մարզական միութիւններու եւ մարզակազմերու: Շատ սահմանափակ թիւով տեղեր: Գին՝ 625 \$-ն սկսեալ:

Մի՛ մոռնաք SAPHIRE գրասանալով ամեն շաբաթ, Պէյրուքի նախահանգիստէն 8 օր Կիպրոս եւ յունական կղզիներ: Գին՝ 485 \$-ն սկսեալ:

29 Յունիս միտեայ շրջապոստ դէպի Ատոնայա, Մապուլայ, Դամասկոս եւ Պլուտոսի ամարանոցը. ձաշկերոյք - խրախձանք, բաց խմիչք, խորովածի տեսակներ: Միայն 25 \$:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար դիմել՝ ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԶ. հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233978 թիւերուն:

#### ՀՈՒՓՍԻՄԵԱՆՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին, այսու կը փոխանցեմք, թէ Ս. Հռիփսիմեանց եւ Գայեանեանց կոյսերու տօնակատարութիւնը կը զուգահիսի յառաջիկայ երկուշաբթի, 16 Յունիս 2003ին:

Այս առթիւ, եպիսկոպոսական սուրբ եւ անճախ պատարագ պիտի մատուցուի Ս. Եկեղեցույս մէջ, երեկոյեան ժամը 7:30-ն սկսեալ:

Պիտի պատարագը եւ յաւուր պատշաճի քարոզէ՝ **ՀՈԳԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին

Սուրբ պատարագի ընթացքին պիտի կատարուի թափօր սուրբերու մատուցմանը, ապա ջրօրհնէր եւ հաւաքական հաղորդութիւն:

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու սոյն արարողութեան եւ վերանորոգուելու Ս. Հռիփսիմեանց կոյսերու հաւատքով:

ՆՈՐ ԱՏԱՆՅՈՒ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

#### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արթիւն Օհաննէսեան եւ զուգակուց Տիկին Արշալոյս Մարաֆեան եւ զուգակուց Տէր եւ տիկին Գէորգ Խաչատուրեան եւ զուգակուց եւ համայն ազգականներ կը գովեն իրենց քրոջ եւ հարազատին՝

#### ԼՈՒԻՋԱ ՕԶԱՆԵՍ ՕԶԱՆԵՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 12 Յունիս 2003ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, լեւոմիթի ժամը 3:30ին, էջրեֆիէի Հայ Աւետարանական եկեղեցույ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրեն Շըպպէի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ● Յաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Արթիւն Օհաննէսեանի բնակարանը, Չալքա, Միշէլ Ալու ժառանգ փողոց, Մալլուս շէնք, Յոր յարկ, Ուրբաթ 13, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Յունիսին:

## ԼԻՔԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԵ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ

ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵ ՕՊԵՅՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար ժան Օպէյտ երկվ ընդունեց Եւրոյաբնորոգի արտաքին գործերու նախագահը յայտնեց, որ Միշէլ Արեւելքի խաղաղութեան գործընթացին առնչուող խաղաղութեան ճամբու քարտէսը առաջին հանգրիւանն է շրջանին մէջ խաղաղութեան հաստատման:

տատման, նկատել տալով, որ Եւրոպական Միութիւնը իր պարտականութիւնը պիտի կատարէ այդ գծով, եթէ խաղաղութեան ճամբու քարտէսը յարաբերութիւն արձանագրէ:

Օպէյտ ընդգծեց, որ կարելի է բռնարարքներու վարչազուրկութիւնը վերադարձնել արաբական կողմին, իսկ անդրադառնալով խաղաղութեան ճամբու քարտէսին, Օպէյտ ընդգծեց, որ նշեալ խաղաղութեան ծրագիրը կը միտի լուծել պաղեստինեւիսրայիլեան տագնապը եւ ոչ արաբեւիսրայիլեան տագնապը:

#### «ՎԱՍԱՅ ՁԱՅՆ»-Ի ԱՅՍՏՈՐԻՄԱՆ ՅԱՅՏԱԳՐՆԵՐԸ

- **ժամը 8:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- **ժամը 8:45** «Աստղեր»
- **ժամը 11:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- **ժամը 12:00** «Խոնք եւ մտածումներ»՝ Ճահանգուխտ
- **ժամը 3:00** HIT PARADE
- **ժամը 5:00** «Գրական Ցուլեր»
- **ժամը 6:00** «Շայ երգաչխարի»
- **ժամը 7:00** «Շայկական ողբերաժշտութիւն»
- **ժամը 8:00** «Շարքամարտ»

#### ԼԻՔԱՆԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՔԱՐՏԷՍԸ

Արտաքին հարցերու խորհրդարանական յանձնախումբը երկվ խորհրդարանին մէջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց խաղաղութեան ճամբու քարտէսը եւ խստի դատապարտեց զայն: Ժողովը գլխաւորեց յանձնախումբին նախագահը՝ Երեսփոխան Ալի Սալիլ, ներկայութեամբ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար ժան Օպէյտի: Ժողովին ետք Սալիլ յայտնեց, որ խաղաղութեան ճամբու քարտէսը կը գտնուի վտանգաւոր կացութեան մէջ: Խալիլ վերահաստատեց նաեւ, որ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը Լիբանանի մէջ անընդունելի է:

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՍՊԱՆԱՏԱՆ ԳՈՐԾԱՎԱՐԸ ԿԸ ԴՐՈՒՄՏԵ ԼԻՔԱՆԱՆԻ ՃԻԳԵՐԸ...



Արդարութեան նախարար Պաիիթ Թապարա երկվ Լիբանանի մէջ ամերիկեան դեսպանատան գործակար Քարոլ Քալիլէն ստացաւ տեղեկագիր մը, պատրաստուած Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան կողմէ, որ կ'անդրադառնայ «մարդու առեւտուր»ի մարպին:

Թապարա յայտնեց, որ Ուաշինկթըն կը դրուատէ Լիբանանի գործակցութիւնը միջազգային տարբեր կազմակերպութիւններու հետ, արգիլելու նման «առեւտուր»: Ան աւելցուց, որ լիբանանեան կառավարութիւնը կանխամտածուած ոճիւրներու դէմ պայքարի ծիրէն ներս վաւերացուցած է շարք մը օրէնքներ եւ պատմը յաճախ խորհրդարանին, որպէսզի Լիբանան անդամ դառնայ նման արարքներ արգիլող միջազգային կազմակերպութեան:

Քալիլ ընդգծեց, որ Լիբանան լրջօրէն կը վարուի նման արարքներու հարցով:

#### ՖՐԱՆՍԱԿԱՆ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԸ ՀԱՄՄՈՒՏԻ ՄՕՏ

Պաշտպանութեան նախարար Մահմուտ Համմուտ երկվ ընդունեց ֆրանսական բանակի ընդհանուր իրաւմաստար եւ սպայակոյտի պետ Կոր. Փիեռ Թոլպոնը, որ կը գլխաւորէր 100 սպայ հաշուող պատուիրակութիւն մը: Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէ եւ դեսպանատան փոխտնօրէն կորոլ Կոր. Միշէլ Քոլոմպ: Քննարկումի առարկայ դարձան շրջանային պարգատումները, ինչպէս նաեւ Լիբանան - Ֆրանսա պաշտպանութեան նախարարութիւններուն միջին երկկողմանի յարաբերութիւնները: Համմուտ ընդգծեց, որ Միշէլ Արեւելքը դժուար հանգրուան մը թեւակոխած է եւ հարցերը վերջնականապէս պիտի չլուծուին եթէ Իսրայիլի գերիշխանութիւնը վերջ չգտնէ:

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՎԱՐԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն նացման եւ պարտադիր բժշկական ապահովագրութեան որդեգրման ինչորները: Ընկ. Դաւիթ Լոքեան, որ նախորդ կառավարական կազմին մէջ կը պաշտօնավարէր իբրեւ Հայաստանի քաղաքաշինութեան նախարար, երկվ ստանձնեց Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնը: Ներկայացնելով նախարարը, վարչապետ Մարգարեան ընդգծեց Լոքեանի կարողութիւնները եւ մասնագիտական մօտեցումները: Լոքեան իր կարգին նշեց, որ ինք սկզբունքային եւ գործարար յարաբերութիւններու կողմնակից է, յոյս յայտնելով, որ նախարարութեան աշխատակազմին հետ գործակցելով կարելի կ'ըլլայ ապահովել նախարարութեան հետագայ արդիւնաւէտ գործունէութիւնը: Վարչապետ Մարգարեան նաեւ համապատասխան իրենց նախարարութիւններուն ներկայացուց նորանշանակ նախարարներ Թամար Պողոսեանը, Արա Արամեանը եւ Սերգէյ Երիցեանը:

<b>ՎԱՐՁՈՒ ԿԱՄ ԾԱՆՈՒ ԲԱՊԻՆ</b> ● Tabarja Beach, քալիմ + կառատուն: Հեռ. 03/232612 եւ 01/320139:	<b>ԿՈՒՉՈՒՄ</b> ● Չորուն ներկայացուցիչներ (իզական եւ արական), ինքնաշարժ ունենալը պայման: Ամսական + շաաքաթիմ: Հեռ. 03-261919:
--	--

**«ԵՐԿԻՐ»**

**ՅՈՒՆԻՍ 13 - ՅՈՒՆԻՍ 19**

**ԲՈՎԱԼԵԿԱԿՈՒԹԻՒՆ**

- Սեր կեանքը փոխելու նոր քայլը..... էջ 1
- Համայնքներուն խզուած է բժշկ - հիւանդ կարգը... էջ 8
- Կազմակերպչական աշխատանքի քառամեակ... էջ 10
- Նոր ներկայացում Համազգայինի բեմուն..... էջ 11
- Փոքր միտքարութիւն..... էջ 14

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ**

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Կարիքը կայ վկայեալ հիւանդապահուիչներու, հետաքրքրողներէն կը խնդրուի անձամբ ներկայանալ, ԸՆՈՎ:

Շաղղոյեան կեդրոն, Բ. յարկ:

**ԾԱՆՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

Սեկնումի առիթով, 3 ճնշասեցեակ, հիւրապահ, ճաշարահ, կահաւորուած, հեռաձայնով, ինքնաշարժի անճանկան կառատուն, եւ կալունսարկողով (թափու), 24 ժամ էլեկտրականութիւն, անճանկան ջրհողով, 120 քառ. մետր շինութիւն + 110 մետր պատշգամ, Ա. յարկ, Պուրմ Համուտ, Կիլիկիա թաղ: Գին փոխան 70,000 \$ միայն 45,000 \$:

Հեռ. 01 - 258887 եւ 03 - 233978

**AIR-KOOL**  
air-conditioning

Be COOL with AIR-KOOL

**THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY**

**Starting 250\$**

Sole Agent:

**G. Ayanian & Sons**

Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (03)627728/9  
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

**ԱՉԳ. ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

Շովանաւորութեամբ՝ **ԱՉԳ. ՌԻՍՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

Նախագահութեամբ՝ **ԽՈՐՀՈՐԱՐԱՆԻ ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱԸ՝ ՊՐՆ. ԷԼԻ ՖԵՐԶԼԻԻ**

Կազմակերպութեամբ՝ **ԱՉԳ. «Գ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

**ՀԱՄԱՀԱՅԻՆԻ «ԲՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԵ» ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵԼՈՅԹ**

Գեղարուեստական ղեկավար եւ պարուսոյց՝ Հայրենի արուեստագետ՝ **ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Յունիս 2003, երեկոյեան ժամը 8:30ին, վարժարանի շրջափակին մէջ:

ՍԱԿ՝ Մեծերու՝ 5 տողար Աչակերտական՝ 3.000 լ. ր.

# ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայաստանի նախագահական պալատին մէջ Չորեքշաբթի, 11 Յունիսին տեղի ունեցած համաձայնական կառավարութեան ձեւաորման պաշտօնական արարողութիւնը մեզի կը ներկայանայ այսօր ուսանելի մեծ դասերով, պատմական յատկաբան թելադրանքներով, ինչպէս նաեւ վճռական յանձնառութիւններով:

Հայաստանի քաղաքական կեանքէն ներս արձանագրուած այս նուաճումին պատիւը առաջին առիթով կ'երթայ հայրենիքին ու անոր փառքը՝ բովանդակ հայութեան:

113ամեայ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը համահայկական իր մեծ կարողականութիւնը առաւելագոյնս ի խնդիր հայրենիքին եւ հայրենի ժողովուրդին ներդրելու առաջադրանքի իրագործման մէջ կը գտնուի աւելի մեծ յանձնառութեան մը դիմաց:

Համաձայնական կառավարութեան ձեւաորման այս առիթը Հայաստանը կը դնէ յառաջադէմ երկիրներու վայել քաղաքական գործընթացի կարելու փորձի մը դիմաց եւ բոլոր ժամանակներէ աւելի Հայաստանի ու հայութեան դիմաց կը բանայ յառաջընթացի, համահայկական ուժերու ու կարողականութեան միաւորման, ինչպէս նաեւ հայութեան գերխնդիրներու լուծման եղակի ու պատմական առիթ մը:

Նորակախ Հայաստանը անցնող տարիներու ընթացքին անցաւ մեծ փորձութիւններէ, դժուարին ճանապարհներէ, ժողովուրդի շարժախիչ համեմատութիւնը պարեցաւ ու կը շարունակէ ապրիլ յուսալքումի, թերահաւատութեան եւ թշուառութեան վիճակի մէջ: Պետական կառոյցը տակաւին երկար ճամբայ ունի հարթելիք ինքզինք բիրեղացնելու եւ կայացնելու համար: Արտաքին ճակատի վրայ, հակառակ ձեւաորում կայուն ռազմավարութեան, մարտահրաւերներն ու սպառնալիքները կը մնան առկայ:

Այսօր սակայն, կա՛յ դէպի առջեւ նայելու եւ հեռանկարային տեսանելի գործադարձ ստեղծելու պատեհ մթնոլորտ եւ առիթ, եւ այս բոլորը՝ փոխադարձ հասկացողութեան ու հասարակական պատասխանատուութեան գիտակցութեան ազգային հարթակին վրայ:

1918ի Հայաստանի հանրապետութիւնը կերտած Հ.Յ.Դաշնակցութիւնը, այսօր՝ արժեքափայլուն նոյն ըմբռնումով, նո՛յն վճռականութեամբ, եւ պարտականութեան ամրակոշ նոյն հասկացողութեամբ, կու գայ համաձայնական փաստաթուղթի իր ստորագրութեամբ անգամ մը եւս հաստատելու իր ազգային անխախտ ուղիին շարունակութեան յանձնառութիւնը:

Այո՛, փոխուած կը թուին ըլլալ ժամանակները եւ կացութիւնները, սակայն մարտահրաւերները կը մնան նո՛յնը, եւ արդեօք ի՞նչ է այսօր առաջնահերթը, եթէ ոչ արդարութեան եւ աշխատանքի յաւելնալ արմատացումը հայրենիքէն ներս: Քննութեան եւ փորձարկման առիթ է այս մէկը Դաշնակցութեան համար, որովհետեւ ան պատմութեան ընթացքին եւ նոյնիսկ այս վերջին ժամանակահատուածին անցաւ բազմաթիւ փորձութիւններու եւ քննութիւններէ ու մնաց մի՛շտ հարապատ իր ժողովուրդին, մնաց անկեղծ իր դաւանած սկզբունքներուն եւ ներկա ըսաւ ամէ՛ն կոչի, որ կու գար նոյն այդ ժողովուրդէն եւ անոր ազգային տեսլականներէն: Գարձաւ համեմատ փինուորը Արցախեան պայքարին, ստանձնեց կռիւի եւ գոյերթի դեկավարութիւնը երբ ժողովուրդը պահանջեց իրմէ, գործեց ժողովուրդի յաղթանակին համար, չզլանալով ոչ մէկ ատեն իր լայնագոյնները նուիրաբերելու դաշնակցականի իր պոհաբերութեան ոգին:

Այսօր, ժողովուրդը դարձեալ կը պահանջէ Դաշնակցութենէն, եւ անոր իրաւունքն է այդ մէկը: Դաշնակցութիւնը կը ստորագրէ համաձայնական

կառավարութեան յուշագիրը, ակնաշարուր ժողովուրդի ձայնին եւ պօրացած անոր տուած վստահութեամբ:

Կա՛յ սակայն յանձնառութեան մեծ բաժին: Եւ այդ յանձնառութիւնը առաջին առիթով դաշնակցական անհատը կը ստանձնէ ինք, որպէսզի պայն դարձնէ վարակիչ:

Այո՛, դաշնակցական անհատը, ուր որ ալ գտնուի այսօր, ի տես արձանագրուած այս նուաճումին եւ այդ առիթով իր մէջ յառաջացած խանդավարութեան, կը դրուի գործի մեծ պարտաւորութեան դիմաց:

Կա՛յ արդեօք դաշնակցական մարդուն համար երկիր կառուցելու, հայրենիք կերտելու, ժողովուրդին ծառայելու հանգամանքներէն աւելի վեհ ու նուիրական պարտաւորութիւն: Ո՛չ, անտարակոյս:

Սակայն այս բոլորը պէտք է արտացոլան կենդանի գործով: Դաշնակցական անհատի այլապէս ծանր յանձնառութեանց կողքին, այսօր՝ կու գան աւելնալու շատ աւելի ծանր պարտականութիւններ, եւ այդ պարտաւորութիւններու գործադրութիւնը պինդ կը դնեն տեղայնականէն եւ առօրեայ մտահոգութիւններէն շատ աւելի անդին անցնելու ու իբր այդպիսին իր հայեացքը սեւեռելու հոն, ուր մեծ աշխատանք կ'ակնկալուի իրմէ:

Վստահաբար դաշնակցական միտքը վաղը կը կատարէ այս իրագործումին արժեւորումը, կը յստակացնէ իր ուղիին եւ կը ճշդէ մարտավարական իր ծրագիրները առաւելագոյնս յաջողցնելու անհրաժեշտ բոլոր միջոցները: Սակայն, հիմնականը կը մնայ դաշնակցական անհատի պատրաստակամութիւնը, գործի հանդէպ հաւատքը եւ դաշնակցականավայել իր ընթացքն ու կեցածքը:

Այս մեծ գործին շուրջ համախմբուելու դաշնակցական անհատի որոշումը տրուած է արդէն ի յառաջագունէ: Ոչ մէկ դաշնակցական անհատ ինքզինք կրնայ հեռու պզայ այս պատմական անհրաժեշտութենէն:

Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեան համաձայնական կառավարութեան փաստաթուղթը ստորագրեց բոլոր դաշնակցականներու անունով. այդ ստորագրութեան արժանավայելութիւնն տե՛ր կանգնելու պարտաւորութեան տակ դրուած են այսօր ոչ միայն հայրենի մեր կազմակերպական կառոյցները, այլեւ Հ. Յ. Դաշնակցութեան ողջ ընտանիքը:

Չօրաշարժ է դարձեալ. եւ այդ պօրաշարժին պիտի գայ միանալու ո՛չ միայն դաշնակցական անհատը, այլեւ համակիր այն մեծ զանգուածը, որ կը կազմէ Դաշնակցութեան ուժն ու յենարանը:

Երկքաղաքացիութեան օրինագիծի որդեգրումը այսօր պիտի գար համարելու բովանդակ հայութեան պարտաւորութիւններն ու իրաւասութիւնները երկրի կայացման գործընթացին մէջ, սակայն դժբախտաբար անգամ մը եւս այդ առիթը յետաձգուեցաւ:

Վստահաբար, վաղը, քաղաքական համաձայնական իր իրար գործադրութիւնը, պիտի ստեղծեն այն յարմար միջավայրն ու մթնոլորտը, որ երկրպագիութեան օրինագիծի որդեգրումը դառնայ իբրեւ համալրող ու քաղաքացիութեան օրինագիծի որդեգրումը դառնայ իբրեւ համալրող ու ամբողջացնող ազգակ: Եւ արդէն դաշինքը իր քաղաքական առաջնահերթութիւններու բաժինին մէջ շեշտուած կերպով կ'անդրադարձանայ սահմանադրական փոփոխութիւններու անհրաժեշտութեան:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ընտրական իր քաղաքացիական ինքնաբան ճշդած էր հայրենի ժողովուրդի կեանքի փոփոխութեան անհրաժեշտութիւնը: Այսօր, փոփոխութեան այդ գործընթացը սկսած է: Կը մնայ ամբողջութեամբ կայուն գործին ու համախմբուիլ անոր շուրջ:

Նոր երթը սկսած է...

ՅԱԿՈՒ ՀԱՄԹԵԱՆ

# Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Երէկ յոյս տեսած լիբանանեան օրաթերթերուն առաջին էջը կը գրաւէին Ռանթիսի մահափորձին իբրեւ պատասխան պաղէստինեան անձնասպանական գործողութիւնը, Սատում Հիւսէյնի վարչակարգի բարձրաստիճան երկու պաշտօնատարներու ձերբակալութիւնը, ԱՄՖՈՎԻԲի զլխաւոր քննիչ Հանս Պլիքսի «յարձակումը» ամերիկացի պաշտօնատարներուն վրայ:

«16 Կոն է 100 վիրաւոր արձանագրուեցան պաղէստինեան անձնասպանական գործողութեան պատճառով, իսկ պաղէստինցի 9 նահատակներ եւ 35 վիրաւորներ ինկան Կապալի մէջ: Իսրայէլեան - պաղէստինեան պատերազմը կ'արդէ խաղաղութեան քարտէսը: Համաս կը պատասխանէ Երուսաղէմի մէջ անձնասպանական գործողութեամբ մը, Իսրայէլ կը հարուածէ Կապալ, իսկ Պուշ աշխարհէն օժանդակութիւն կ'աղերսէ», գրած է «Մաֆիր»:

«Տիար» նշած է, թէ անձնասպանական գործողութիւնները անակնկալի բերին Շարոնը եւ ապշեցուցին Ուաշինկթընը: Ըստ թերթին, ամերիկացիներուն բարկութիւնը հանդարտեցնելու փորձ մը ընելով, Շարոն կը փորձէ համուզիչ դրդապատճառներ տալ Ռանթիսի մահափորձին համար, իսկ իսրայէլեան բողոքի այիք մը կը բարձրանայ այս գործողութիւններուն դէմ:

«Մուսթաքպալ» նշած է, որ Համաս կը յայտարարէ, որ Իսրայէլի հետ հանդարտութեան հասնելու ոչ մէկ ձեւ գոյութիւն ունի, իսկ եգիպտական գաղտնի սպասարկութեան պետ Սէյման Արաֆատի եւ Ապպաի հետ կը խորհրդակցի համաձայնութեան մը յանգելու ձեւերուն շուրջ:

«Լիուս» նշած է, թէ «Համաս» կը հակադարձէ հարուածելով Երուսաղէմի սիրտը. Կապալի դէմ ուժեղացնելու կը վերսկսին, իսկ Քասսամի փաղանգներու երկու անդամները կը նահատակուին: Պուշ կը դատապարտէ բռնարարներն ու սպանդը:

«Բիֆաի Արապի» դիտել տուած է, թէ Պուշ պաղէստինցիները պատասխանատու կը նկատէ անտեսելով Թէլ Աւիւր, իսկ Շարոն կը խոստանայ յառաջիակացք արձանագրել խաղաղութեան գործընթացին եւ պաղէստինցիները ահաբեկելու գործողութիւններուն մէջ: Արաֆատ եւ Ապպա կը դատապարտեն իսրայէլացի քաղաքացիներուն դէմ ահաբեկչութիւնը:

Ըստ «Նահար»-ի, «Համաս»-ի մէկ անդամ օթոպիւս մը պայթեցուց Երուսաղէմի մէջ, պատճառելով 16 իսրայէլացիներու մահ, իսկ Իսրայէլ Կապալի մէջ կը սպաննէ 10 պաղէստինցիներ: Պուշ կոչ կ'ուղղէ պայքարը կասեցնելու, իսկ Քոնկրէսը կը պահանջէ ՕՍԼՄ-ի ուժերուն դիմել՝ կացութիւնը հակակշիռի տակ առնելու համար:

«Սնուար» գրած է, թէ Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուսարաբ կը զգուշացնէ Ապու Մադէնի եւ խաղաղութեան քարտէսի ձախողութենէն: Գահիրէ կը յայտարարէ, թէ Ռանթիսի դէմ մահափորձը կը միտնէր խաղաղութեան գործընթացին վնաս հասցնել:

Իրաքեան պատերազմին առնչութեամբ Հանս Պլիքսի ունեցած արտայայտութիւններուն մասին «Նահար» գրած է, թէ Պլիքս կը հրաժարի իր

վերապահութիւններէն եւ յարձակում կը գործէ ամերիկացիներուն վրայ յնյտարարելով. «Անոնցմէ ոմանք «աղտոտ» քաղաքականութիւն վարեցին եւ ճնշումներ բանեցուցին քննիչներուն վրայ»:

«Սնուար» նշած է, թէ ամերիկեան կեդրոնական մարմինը հաստատեց, թէ իրաքցի երկու փնտրուած անձեր ձերբակալուած է: Ըստ թերթին, 150 իրաքցի ընտանիքներ անտուն մնացած են, իրենց տուններէն վտարուել էոք:

Ըստ «Պայրաք»-ի, Պլիքս իր պաշտօնէն հրաժարելէն ետք յայտարարեց, որ ամերիկացիները յիմար են:

Այլ լուրերու կարգին «Մաֆիր» գրած է, թէ Մարիտանիոյ մէջ նոր յեղաշրջումի մը մասին նախատեսութիւններ կան եւ հարցադրումներ շրջան կ'ընեն, թէ արդեօք Իսրայէլ օժանդակած է Թայէհր փրկելու աշխատանքին:

Ըստ թերթին, 160 հազար տարուան կեանք ունեցող մարդկային գանկեր յայտնաբերուած են Արեւելեան Աֆրիկէի մէջ:

«Լիուս» գրած է, թէ Եգիպտոսի գաղտնի սպասարկութիւններու պետ պօրավար Սիւլէյման կիստ կը զգէ իր առաքելութիւնը եւ ձեռնունայն կը վերադառնայ առանց իսրայէլացիներուն հետ տեսակցելու:

Իրանի շուրջ շրջան ընող լուրերու կարգին «Լիուս» գրած է, թէ Պրեմըր կը յայտարարէ, որ Իրան ջանք կը թափէ հարուածելու ժողովրդավարութիւնը: Ռամաֆէլտ Իրանը կ'ամբաստանէ կորիպային կէնքերու աշխուժ ծրագիր մը ունենալու յանցանքով, իսկ հապարաւոր իրանցիներ երկրորդ օրն ըլլալով ցոյցեր կը կատարեն:

«Բիֆաի Արապի»-ի համաձայն, Թեհրան կը ձերբակալէ 80 անձեր, որոնք կը դատապարտեն երկրին հոգեւորականները:

Ըստ «Տիար»-ի, Ռամաֆէլտ յայտարարեց, որ Իրան հետպիտեմ աւելի կը մօտենայ կորիպային կէնքեր ունենալու իրականութեան:

Տեղական լուրերու կարգին, ակնարկելով նախագահ Լառուտի եւ Ժոմպլաթի հանդիպումին, «Պայրաք» գրած է, թէ նախագահը Ժոմպլաթին ըսաւ. «Կառավարութեան դերակատարութեան աշխուժացման մասին կը խօսին, մինչդէռ այդ մասին յաճախ կոչ ուղղած եմ՝ իշխանութեանս օրով: Ժոմպլաթ դարձեալ հաստատեց պապապետականացման գաղափարը մերժող իր կեցումովը», նշած է օրաթերթը:

Ըստ «Լիուս»-ի, նախարարաց խորհուրդի առաջին նիստին օրակարգը կը բաղկանայ 60 կէտերէ, իսկ տարակարծութիւններն ու անհամաձայնութիւնները կը շարունակուին:

«Մուսթաքպալ» դիտել տուած է, թէ թերթին հետ հարցազրույցի ընթացքին Ժոմպլաթ ըսած է, որ ինք ամբողջական համաձայնութեան մէջ է նախագահ Լառուտի հետ, իսկ Սահմանադրութեան մասին վերջնական որոշումը պիտի տրուի նախարարաց խորհուրդի ժողովներուն: Ըստ թերթին, բացայայտուեցան ինքնաշարժներու գողութեան ծրագրող երկու խմբակներ, որոնցմէ մէկուն դեկավարը լիբանանցի աղջիկ մըն է:

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.

## «ՀԱՍԿԵՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»

Ծիսական արարողութեան մէջ հիմնական տեղը գրուող Ս. Պատարագին եւ յատկապէս Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագի պարզացման հասկանքները, անոր խորհուրդը ժողովուրդին ծանօթացընելու միտումով, Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.ի կազմակերպութեամբ, երէկ, 12 Յունիսի երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տեմիթեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Հասկանքներ պատարագը» դասախօսական երեկոյ մը:

Բացման խօսքը կատարեց Ամծէլ Ճանճանեան, որ ակնարկելով Ս. Պատարագին, անոր շարականներուն, ծիսակատարութիւններուն եւ խորհուրդին, ըսաւ, թէ «Սնդրանիկ» մշակութային միութիւնը այս մեծ ծրագրով կազմակերպուած է, որովհետեւ կը հաւատայ, թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցին ժողովուրդի գոյատեւման կարգի գործընթացն է: Ան աւելցուց, թէ ասկէ մեկնած՝ նոր սերունդները պէտք է ծանօթանան եկեղեցւոյ ծիսական տեղը գրուող Ս. Պատարագին եւ յատկապէս Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագի պարզացման հասկանքները, անոր խորհուրդը ժողովուրդին ծանօթացընելու միտումով, Հ.Բ.Ը.Մ.ի կազմակերպութեամբ, երէկ, 12 Յունիսի երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տեմիթեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Հասկանքներ պատարագը» դասախօսական երեկոյ մը:

Բացման խօսքը կատարեց Ամծէլ Ճանճանեան, որ ակնարկելով Ս. Պատարագին, անոր շարականներուն, ծիսակատարութիւններուն եւ խորհուրդին, ըսաւ, թէ «Սնդրանիկ» մշակութային միութիւնը այս մեծ ծրագրով կազմակերպուած է, որովհետեւ կը հաւատայ, թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցին ժողովուրդի գոյատեւման կարգի գործընթացն է: Ան աւելցուց, թէ ասկէ մեկնած՝ նոր սերունդները պէտք է ծանօթանան եկեղեցւոյ ծիսական տեղը գրուող Ս. Պատարագին եւ յատկապէս Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագի պարզացման հասկանքները, անոր խորհուրդը ժողովուրդին ծանօթացընելու միտումով, Հ.Բ.Ը.Մ.ի կազմակերպութեամբ, երէկ, 12 Յունիսի երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տեմիթեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Հասկանքներ պատարագը» դասախօսական երեկոյ մը:

տարեան ըսաւ, թէ Պատարագ կը նշանակէ ընծայ, Կոն, իսկ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ պարզագային՝ Քրիստոսի խաչի վրայ վոդագործման խորհուրդը:

Ան նշեց, թէ Ս. Պատարագին հիմը եւ խորհուրդը կը հանդիսանայ հացի բեկանուներ, որոնք վրայ սպասքային աւելցած են Աստուածաշունչէն ընթացող մտայնութիւնը, կարճ աղօթքները, սպասքային արձանագրութեան եւ արձանագրութեան բաժինները:

Ակնարկելով Ս. Պատարագի արարողութեան հանգրուաններուն, սրբապատմական շեշտեց, թէ հաւատացեալները եկեղեցւոյ մէջ միայն ներկայութիւնը շարականները անընթաց են, թէ՛ իրենց իւրաքանչիւր շարականները անընթաց են իրենց մասնակցութիւնը բերեն, հասկընան ու հոգեպէս լեցուցելու անոր խորհուրդով, որպէսզի հաղորդակից ըլլան անոր իսկական խորհուրդին:

Դասախօսութեան արարողին սրբապատմական շեշտեց, թէ հաւատացեալները պատասխանեց ներքին պատասխանեց ներքին:

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՇԻՄԱԿԱՆ ՈՒ ԱՌԱՋԱԿԵՐԹԸ՝ Ե. Յ. Դ. ՅԵՏՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Քաղաքական պայքարի դաշտ մտնողը օժտուած պէտք է ըլլայ որքան յարմար կ'ընտրուի փոխակառուցողները, նոյնքան եւ դժուարութեանց բախելու պարագային խոչընդոտները յաղթահարելու հաստատակամութեամբ:

Այդպէս է, որ ուղիներու քաղաքական պայքարն ալ ունի իսպառի իր կանոնները, որոնց համաձայն՝ միեւնոյն մետալին զոյգ ու բնական երեսներն են յաղթանակի վճռակալութիւնը եւ պայքարը նորոգի թափով շարունակելու մարտունակութիւնը:

25 Մայիս 2003ին կայացած Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններուն փաստօրէն պարտութիւն կրեց մեր ժողովուրդը: Ազատ, արդար ու ժողովրդավար ընտրութեան իր իրաւունքին փոխարէն, ստացաւ կառաքով, կեղծումով եւ բռնութեամբ արտորոշուած «ընտրութիւն»:

Այդ առումով իր լիարժէք յաղողութենէն զրկուեցաւ նաեւ մեր կուսակցութիւնը, որ 25 Մայիսի ընտրապայքարին լծուած էր, ամէն բանէ առջեւ էր վեր, ազատ ու արդար ընտրութեան կայացումը ապահովելու յանձնարուածները:

Ի վերջոյ ազգովին՝ ներառելով յաղթանակը անիրաւորէն խոչընդոտ, քաղաքականօրէն ընկերկումի դատապարտուեցանք, որովհետեւ մեր երկրին, ժողովուրդին ու պետականութեան առջեւ ծառայած դժուարութեանց յաղթահարումը համախմբուած եւ համազգային ուժերու լարում կը պահանջէ, իսկ քաղաքական անբարոյականութեան գնով ձեռք բերուած որեւէ յաղթանակ ու իշխանութիւն պարզապէս խոչընդոտ եւ օտարացում կ'առաջանեն ու, իրրեւ ալ չպիտի, դատապարտուած են անոյս եւ անհեռանկար մնալու:

Այսպիսով, մեր երկիրն ու ժողովուրդը տազնապէջընող ընկերային անբարոյականութեան՝ իշխանութեան չարաշահումներու, կոռուպցիայի եւ ստուերայի ուժերու գործած անարդարութեանց վրայ գումարուելու եկաւ ընտրութեան հետեւեալ քաղաքական անբարոյականութեան հիմքը:

Մանր է իրապիսակը: Համատարած է հիասթափութիւնը:

Բայց յատկապէս նման պահերու համար անհրաժեշտ է ընկերկումը ներքնապէս յաղթահարելու հաստատակամութիւնը:

Ինչպէս մեր ժողովուրդը, այնպէս ալ անոր քաղաքական կամքը ներկայացնող քաղաքական ուժերն ու կուսակցութիւնները իրաւունք չունին անձնատուր զառնարու անօրութեան եւ ձեռնմխութեան:

Ընդհակառակն՝ հարկ է բարոյական պատասխան տալ կատարուածին:

Որոշապէս Դաշնակցութիւնը ընտրած է այդ ուղին: Ինչպէս որ 25 Մայիսի բռնարկութեան վերջնական արդիւններու պաշտօնական հրապարակման առիթով կ'ըստարարէր Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինը, Դաշնակցութիւնը կայացած կը նկատէ Ազգային ժողովի ընտրութիւնը՝ կատարուած բոլոր ընտրախախտումներով եւ զեղծումներով հանդերձ ու հակառակ այն իրողութեան, որ նորընտիր Ազգային ժողովը չի ներկայացներ Հայաստանի քաղաքական ուժերու հարազատ պատկերը:

Եւ նոյնինքն քաղաքական այդ անբարոյականութեան հատուկ բարոյական պատասխան տալու վճռականութեամբ, Դաշնակցութիւնը մեծամասնութեան տիրացած քաղաքական ուժին յաղողութիւն կը մարտնչէ՝ միաժամանակ շեղուելով երկրի, ժողովուրդի ու պետականութեան առջեւ ծառայած հիմնահարցերը լուծելու անոր պատասխանատուութիւնը:

Աւելին. Դաշնակցութիւնը տէրն է նախընտրական իր խոստումներուն, ինչպէս նաեւ նախագահական ընտրութեանց առիթով ներկայացուած այն ուղեգիծին, որուն հիման վրայ մեր կուսակցութիւնը պայքարածնէ Հայաստանի գործող նախագահի թեկնածութիւնը: Մանաւանդ, որ ընտրազանգուածը կարեւոր համեմատութեամբ վստահութեան իր բռնէն տուած Դաշնակցութեան եւ մենք բարոյական պարտքին տակ ենք, վստահութեան ալ դրամագլուխի ուժով, շարունակելու մեր երթը՝ ինչպէս արմատական բարեկարգումներու իրականացումին:

Անշուշտ դժուար հանգրուան մը թեւակոխած ենք, որովհետեւ արմատական բարեկարգումներու ճամբուն վրայ մենք ուղեկից ընտրած ենք ուժեր, որոնք քաղաքական բարոյականով խոցելի դուրս եկան ընտրութիւններէն: Հետեւեալները արդէն զգալի են թէ՛ Ազգային ժողովի յառաջիկայ ղեկավարութեան ընտրութեան եւ թէ՛ նոր կառավարութեան կազմութեան համար տարուող բանակցութեանց ընթացքին՝ իշխանութեան մէջ միայն «կարկանդակ» տեսնելով եւ յաղթանակի իրաւունքով «աւար»էն առիւծի բաժինը խլելու մոլուցքը դրսեւորելով... Ի՛նչ փոյթ, որ երկրի, ժողովուրդի եւ պետականութեան առջեւ ծառայած դժուարութիւնները յաղթահարելու նախընտրական խոստում տուած են եւ, բացարձակ մեծամասնութիւն կազմող ուժի բացակայութեան, ստիպողութեան տակ են համախոհական կառավարութիւն կազմելու եւ համապատասխան գործունէութեան ուղեգիծը որդեգրելու:

Այս բոլորը աւելիով կ'ամրապնդեն Դաշնակցութեան վճռականութիւնը, որպէսզի յետ-ընտրական իր քաղաքականութեան մէջ կառուած մնայ բարոյական պատասխան տալու իր որոշումին:

Մաքուր ձեռքերով իշխանութեան կայացումն ու ընկերային անարդարութեանց սրբազրուած հիմնական եւ առաջնահերթ կարեւորութիւն կը ներկայացնեն Դաշնակցութեան համար: Իսկ արմատական բարեկարգումներ պահանջող այդ ուղիին վրայ պարզուած քաղաքական անբարոյականութեան հիմքը յաղթահարելու համար բարոյական պատասխանով գործելու հաստատակամութիւն է հարկաւոր:

«ԳՐՈՇԱԿ»

# ՎՏԱՆԳԱԲՈՐ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ՝ ՆԱՄԱՇԽԱՐՀԱՅԱՅՆԱՑՈՒՄ

Վերջին տասնամեակին հետզհետէ ծաւալած երեւոյթ մը կը տիրէ ամբողջ աշխարհի վրայ: Երկրագունդին տիրապետելու մեծ ախորժակն է այդ, որուն արդի քաղաքակրթութիւնը կամ ընկերութիւնը տուած է համաշխարհայնացում անունը: Օտար բառով մը ծանօթ է ան բոլորին. «Կլոպալիզացիոն»:

Բառը ախորժակուր է, նոյնիսկ ականջ կը շոյջ, երբ ֆրանսերէն առողջարարութեամբ արտասանուի: «Անուշիկ» բառ մը, բայց կը նմանի շատ լեզի ղեղահատի մը, զոր կը պատեն շաքարով՝ դիւրաւ կլլելու համար... Համաշխարհայնացում. հայերէնով բաւական երկար է բառը, բայց ճիշդ թարգմանութիւնն է: Վեց վանկերէ բաղկացած այս բառը նոյն ատեն վստահաւոր «միջուկ» մը ունի: Ինչո՞ւ: Պատասխանելու համար հարցումին, հարկ է, որ մեր ընթերցողները պարբերաբար կարդան (անշուշտ չափեր ալ կարդացած են եւ ծանօթ են բառին) ծաւալող այս գերարդիական բռնատիրութեան մասին գրուած տեղեկութիւնները, անոր սահմանուած դրական կամ ժխտական բարիքներն ու չարիքները: Հայ ժողովուրդը մասնաւորաբար, իրրեւ աշխարհին ներկայացած փոքրաթիւ ազգ, կը սարսափի այս բառին, որովհետեւ խորքին մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ մեծ ազգերու, աւելի ճիշդ՝ այս օրերուն միակ մեծ պետութեան մը, աշխարհակալ Ամերիկայի տիրակալութիւնը իր սահմաններէն դուրս: Իրաքը արդեօք առաջին պա-

տման է: Քարիւղի հոտը «անուշաբոյր» է այսօր, կը սփռուի համայն աշխարհի վրայ, ու կարելի չէ դիմադրել անոր «բուրմունքին»:

Որպէսզի մեր գաղութի հայրերը տեղեկ մնային համաշխարհայնացումին «առաքելութեան», Համազգայինի Շրջանային վարչութիւնը կազմակերպած էր կլոպ սեղան մը, որուն շուրջ զրուցելու եւ տեսակէտներ արտայայտելու հրաւիրուած էին նոր մտաւորականներ, հրապարակագիրներ, Յակոբ Պալեան (Փարիզէն), Վրէժ-Արմէն (Քանադայէն), տղթ. Յովհաննէս Թապալեան (Լիբանանէն) եւ Վաչէ Փափագեան (Լիբանանէն): Հանդիպումը տեղի ունեցաւ 9 Յունիս 2003ին Համազգայինի «Լեւոն Շանթ» Մշակութային կեդրոնի «Գէորգ եւ Հերմինէ Արմէնեան» սրահին մէջ, ուր ներկայ եղան գաղութի մտաւորական զանազան հայրերը, ուսուցիչներ, ուսանողներ: («Ազգակ» 10 Յունիսի իր համարով բլրակային խորհրդակցութիւնը արձաւ ձեռնարկին):

Կլոպ սեղանին շուրջ մասնակիցները պարզաբանեցին հարցը, քննարկեցին համաշխարհային այս համայնակուլ շարժումին «օգտակար» եւ «վնասակար» երեսները ու եզրակացութեան եկան, թէ այս շարժումը մեծ վնաս կը բերէ փոքր ազգերու ինքնութեան պահպանման, մշակութային թէ բարոյական, քաղաքակրթական թէ տնտեսական տեսակէտներով: Ուրեմն, ըսին անոնք, իրրեւ հայ ժողովուրդը կը գտնուի մարտահրաւէրի մը դիմաց, զոր ստիպուած ենք դիմակալելու քաղաքակրթական, առանց ընկերկումի, առանց ազդուելու: Բայց

իրականութիւնը այն է, որ համակարգչային եւ համայնացային գերարդիական ու աշխարհասփիւռ գիտութեան դիմաց, իրրեւ աշխարհի բաղկացուցիչ տարրերն մէկը, արդէն կլլանուած ենք անով, միաժամանակ ենք աշխարհայնացումի ցանցերուն մէջ: Ուրեմն, վստահուած է մեր մշակութիւնը, մեր երզնէն ու պարզ (որոնց օրինակն ու փաստը մեր աչքերուն ստիպել է շնորհիւ պատկերասփիւռային եւ համայնացային հեռափոխումներուն՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռք): Հայրերն ինքն սփռուած ու հարցորուած երգերը հայկական յորինումներ չեն, արեւմտականացած ոճով սարքուած ճիչեր, այսինքն՝ ամերիկանացած պոստ-սոցիալիզմը: Իսկ մենք իրրեւ արդիական աշխարհի հետեւող «ազատամիտներ», նոր ալիքներու հատարում «յառաջդէմ» տարրեր, կ'ուսնիչները այդ ամէնը: Պէտք է ընդունինք նաեւ այս այլանդակ, ամերիկանացած երգերուն մեկնարանները գովաբանող խօսքերը:

Յիշեալ հանդիպումին ներկայներէն ումանք յայտնեցին իրենց տեսակէտները. ումանք ըսին, թէ «կարիք չկայ այդքան վստահութեամբ, որպէսզի մեր կուսակցութեան ղեկավարները, որպէսզի իրենց օգտուելու առիթները ալ կ'ունենանք» եւ այլն: Բայց րիւսի օրինակը Պրազիլի կոյս անտառներուն փճացումին, ստապրումներուն, որպէսզի փայտի ճարտարարուեստին սեփականաշնորհումին տիրացած մեծեր քանդեն մշակութիւն, իսկ իրաւաբանները անկուցիւր կ'առաջարկեն իր ալիքներուն՝ ոչնչացընելով գոյնը այդ տեսա-

կին: Եթէ այսօր Պրազիլի անտառներն են փճացողները, ուր մնաց մեր փոքրիկ ազգին ինքնապաշտպանութեան ուժը կրնա՞նք դիմանալ այս աւերիչ ու քանդիչ, ուրաւանի ընթացած խորշակային ալիքին... Այդ իսկ է հարցը...

Զրուցողները թելադրեցին դիմադրել, տոկալ: Այսինքն՝ ինքնութիւն ու հայկական-ցեղային դիմազիծ պահպանել: Ըսին անոնք, թէ համաշխարհայնացումն այս կայսրութիւնն ալ օր մը պիտի տապալի, ինչպէս տապալեցան Հռոմէական կայսրութիւնը, Համայնավարութիւնը, Համայնակցութիւնը, բնութեան ղէմցուած բոլոր ապօրէն ու անբնական շարժումները պիտի մարին ու մեռնին: Հարկ է արթնուն մնայ հետեւի տեղատուութիւններու եւ մակընթացութիւններու, մեր հարազատ փերուէն՝ ամուր ու կանուր մնալու համար:

\*\*\*

Վերադառնալ հանդիպումին ներկայ եղողներուն ուղեգիտն մէջ հակասական խորհումներ խմորուե-

ցան: Արդեօք հայ ժողովուրդը պիտի դիմանա՞ր համաշխարհայնացնող այս տաք ու պաղ ալիքին, Հայաստանէն մինչեւ Սփիւռք: Հայուն տեսակը պիտի պահպանուի՞ արդեօք, թէ պիտի մնայ թանկարանային նմուշ: Հարցը կախալ է հայուն անխորտակելի կամքէն. եթէ տոկացած ենք Յազկերտնէրու, թուրք ու թաթարին, ստալինեան գուլու մեքերուն, տեսակաւոր աշխարհակալներու ջարդերուն եւ կեղեքումներուն, ուրեմն պիտի դիմանանք նաեւ այս նոր աշխարհակալութեան, որովհետեւ բոլոր կեղծ կայսրութիւնները, բնութեան ղէմցուած բոլոր ապօրէն ու անբնական շարժումները պիտի մարին ու մեռնին: Հարկ է արթնուն մնայ հետեւի տեղատուութիւններու եւ մակընթացութիւններու, մեր հարազատ փերուէն՝ ամուր ու կանուր մնալու համար:

ՇԱՀԱՆԳՈՒԻՍ



## AFHIL

### ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT  
AND  
SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

• Over Bed Table

• All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME  
MEDICAL  
EQUIPMENT  
SERVICES

ՅՈՒՑԱՍԱՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՇՈՐ  
ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱՐԿ  
(ՇՈՒ. 021) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...  
... OR WHERE YOU NEED.





## Orient Plus

KHAZZAZ TRAVEL & TOURISM

### Touch New Worlds



# Farna

\$319

8 days - Direct Charter Flight  
Every Tuesday starting from 8 July

Other Destinations

Boat Trip to  
Cyprus 3 Days  
Cyprus & Greece

\$190    \$425

All prices do not include the Visa of regional, Taxes and Insurance.

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT  
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598,    901598  
03.258336,    256254  
[www.orientplus.com](http://www.orientplus.com)

### ՄԵՆ ԺՈՂՔԵՑ ՀԱՄԱԼՍԱՐՍԵԻ ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԷ

Հայկական նիւթերու նուիրուած  
դասախօսական շարքին

## ԵՃՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՒՆ ԸԵՏ

Անթիլիասի Սեօի Տաճի Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ, նաեւ այցելութիւն Կիլիկիոյ թանգարանը, Ծաբաթ, 14 Յունիս 2003, կեսօրէ առաջ  
Ժամը 11:00իւ:

ԵՐԱԵՐ



# FUEL CARD

## ԳՈՐԾԱԾԵԳԵՔ

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:

Երբ մագուլթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARD-ը՝ հեռաձայնելով


### 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պոլոճ Դամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Դանքաշ, Կալէրի Իթփիատ
- ▶ ԴՅՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց

- ▶ MALLAH - Դարեթ Դաուարնէ
- ▶ MALLAH - Պալիսի
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Լահր, «Փոթօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապալտէք



# 7րդ Արուեստ



## ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՄԵԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱՄԱՇԽԱՆԱՐՆԱՅԻՆ ԱՐԱԳ ՆՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԼՈՒԾՈՒՄ՝ ԺԱՊԱԷՆՆԵՐՈՒ ՅԵԼՈՒԶԱԿՈՒԹԵԱՆ

Մինչ ամրան մեծագույն պրոբլեմներում մեկ մասը արդեն իսկ որոշ ժամանակ է վեր իր տիրապետության տակ առած է շարժապատկերի սրահները, որոնց շարքին, առանց որևէ ուշացումի, նաև իրաճանան սրահները, նման ժապաւեճներու սիրահարներուն համար ուրախալի երեւոյթ է յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն գալուստը այլ մեծ արտադրութիւններու, որոնք կը յատկանշուին նշանաւոր դերասաններով, բեմադրիչներով եւ մանաւանդ իւրաքանչիւր ժապաւեճի հետ աւելի գարգացող մասնայատուկ ազդեցութիւններով: Սակայն կայ կարեւոր երեւոյթ մը, որ սկսած է ակնբախ դառնալ վերջին ամիսներուն. այս ժապաւեճները լիբանանեան, եւ ոչ միայն լիբանանեան, սրահները կը հասնին անոնց ամերիկեան հրապարակումի օրերուն: Տակաւին լիբանանեան սրահներուն մէջ յամեցող եւ տոմսակներու կարեւորագոյն վաճառքները արձանագրող «Տը մէյթրիքս Ռիոտրա»-ի եւ «Էքս-2. Էքս մէն եունայըրթ»-ի առանց ուշացումի

բրոքըր» «Տը Հալք» եւ «Թըմիճէյթըր 3» ժապաւեճները: Ժապաւեճներու այս մեծատիրութիւնը բնականաբար ենթադրել կու տայ նաեւ անոնց ետին կանգնող շարժապատկերի արտադրիչ ընկերութիւններուն շահերը: Ստորեկը ներկայացնենք «Տի Էքս-2»-ի սրահները մէջ լոյս տեսած յօդուած մը, որ կ'անդրադառնայ շարժապատկերի աշխարհի այս երեւոյթին, որուն պատճառը կը նկատուի արգելք դառնալ ժապաւեճներու յեղուկակուրեան եւ ապօրինի արձանագրութիւններուն:



«Թըմիճէյթըր 3» ժապաւեճ

Երբ կենդանի դժանդհարներու ալկոհոլիզմով մարդիկը «Էքս մէն 2» ժապաւեճով մեծ պատաստ վերադարձան, ժապաւեճի մը համաշխարհային տարողութեամբ միաժամանակ հրապարակման մեծագույն իրադարձութիւնը տեղի ունեցաւ: «Թուենթիթի Սենթրի Ֆոքս» ընկերութիւնը 48 ժամուան մէջ ժապաւեճը հրապարակեց 93 տարածքներու վրայ՝ Լիբանանէն մինչեւ Լիթուանիա: Միայն Ամերիկայի մէջ ժապաւեճին առաջին ցուցադրութիւնը

կարծակի հոսանքը անդրադարձն է շուկայի մարտավարութեան փոփոխումներուն, ան միաժամանակ մաս կը կազմէ ժապաւեճի աւազակութիւնը որ դեր է հանելու Հոլիվուտի ճիգերուն:

Այլ շարունակութիւններու եւ կենդանի դժանդհարի հորթերու հերոսներու հոսքով մը «Ֆոքս» փափաքեցաւ «Էքս մէն 2»-ը վերածել առաջին մեծ ժապաւեճին ամրան եղանակին, որ կը յատկանշուի

նուն ժապաւեճին): Հոլիվուտեան ժապաւեճն մը միջին հաշիւով կ'արժէ ութսուն միլիոն տոլար, գումար մը, զոր արդարացնելը դժուար պիտի ըլլայ եթէ եկամուտները անկուճար ընդունեն: «Մոշըր փըշըր Էսոսիթիզըն աֆ Ամերիքա»-ի հաշուարկումներով ժապաւեճներու յեղուկակութիւնը տարեկան աւելի քան երեք միլիառ տոլար կը կողոպտէ ամերիկեան սթիւտիոններէն:



«Էքս 2. Էքս մէն եունայըրթ» ժապաւեճն, որ միաժամանակ սկսաւ ցուցադրուիլ աւելի քան իննսուն երկիրներու մէջ:

Մօտաւոր հաշուարկումներով օրական 500 հազար ժապաւեճներ ապօրինաբար համացանցի միջոցով կ'արձանագրուին: Լաւորակ «Տի. Վի. Տի»-ի մը ամերիկեան հրապարակումէն միայն օրեր ետք, յաճախ ամերիկեան լուսաւորութեան ընթացքում թուային արձանագրութեան մը «Տի. Վի. Տի»-ն կարելի է գտնել արտասահմանի փողոցի շուկաներուն մէջ: Մինչ երկար ժամանակ է վեր ժապաւեճի յեղուկակութիւնը Ասիոյ մէջ գլխացաւ մը եղած է, ան ներկայիս կը տարածուի Բրիտանիոյ եւ Աւստրալիոյ նման շուկաներ:

Այս հարցը Հոլիվուտի համար դարձած է մղձաւանջ: Մեր ճարտարաբանութիւնն ինչ էր որ ղեկավարէր ղեկավարող մեծագույն հարցերէն մէկն առաջ՝ իրենց զբաղելով Միացեալ Նահանգներու մէջ տուեալ ժապաւեճին տոմսակներու վաճառքի կողմէն, կատարելով ծանուցումներ վրայ: Սակայն ներկայիս, շնորհիւ համացանցի միջոցով տարածմանը թիւերն են իրենց անմիջական փոխանակումին, Միացեալ Նահանգներու մէջ ժապաւեճի մը ծանուցումները համար յատկանշուած գումարները աւելի արդիւնքի կը հասնին, եթէ ժապաւեճը միաժամանակ հրապարակուի արտասահմանի մէջ:


Համաշխարհային միաժամանակ հրապարակումը հարցը պիտի լուծէ՞: Ան կրնայ վերջին արդիւնքի ամփոփ սկաւառակներ զնելու պատճառներէն մէկը՝ անհամբերութիւնը: Օրինակի համար, 1999ին «Սթար ուորզ» էփիզոս 1»-ի ապօրինի օրինակները հեղեղեցին ասիական շուկաները, մինչ ժապաւեճը տակաւին կը ցուցադրուէր ամերիկեան պատաստներու վրայ: Երբ ժապաւեճը ցուցադրուելու սկսաւ Ասիոյ մէջ, հանդիսատեսներու թիւը շատ նուազ էր: Սակայն ամէն պարագայի ան պիտի չսանձէ համացանցի վրայ ժապաւեճներու թղթածը: Ինչպէս երաժշտութեան ճարտարաբանութեան փաստեց, դժուար է, որ սպառողները հրաժարին ճիշդ պարունակութեան գաղափարէն: Որքան ուշ շարժապատկերի ճարտարաբանութեան ժապաւեճներ օրինական կերպով համացանցէն արձանագրուելու առեւտրական միջոցներ յղանայ, այնքան դժուար պիտի ըլլայ այս հարցը շրջանցելը:

### Նոր ժապաւեճներ

**«ԷՆԿԸՐ ՄԵՆՅԵՃՄԵՆԹ»**  
**Բեմադրիչ՝ Փիֆլեր Սիպալ**

Վաստակաւոր դերասան ձեռք նիքըլսըն ու վերջին բանի մը տարիներու հոլիվուտեան կատակերգութիւններուն նոր հերոսը նկատուող էտրմ Սենտլըրը միացնող այս կատակերգութեան մէջ միշտ զիջող, համբերատար եւ հանդարտաբարոյ Տէյվ Պագինը (էտրմ Սենտլըր) օղակալին նամբորդութեան ընթացքին կը դառնայ քիւրիմացութեան մը զոհը եւ ինքզինք կը գտնէ տարօրինակ նամբորդի մը կողքին: Անոր նոր ընկերակիցը ուրիշ մէկը չէ, Էթէ ոչ գայրոյթի հակաշուրժի տեսարան եւ հոգեբան Պատի Ռայտըր (ձեռք նիքըլսըն), որ բազմաթիւ պատճառներ ունի զինք շրջապատող անձներուն եւ նոյնիսկ հանդիսատեսներուն գայրոյթը գրգռելու: Թիւրիմացութիւններու շարանը կ'երկարի, եւ Տէյվ կ'իյնայ բարեացակամ Պատիի ճիւղակներուն մէջ: Երգիծական խոսակցութիւններով ու դիպաշարով հարուստ այս ժապաւեճին ընթացքին Տէյվ իր շրջապատէն հետոյ տեսնելու մեծ տարողութեամբ ճնշումի կ'ենթարկուի իբրեւ յարձակողական եւ բարկացկոտ անձ, իսկ բնութագրութեան խուսափելու անոր միակ միջոցը Պատիի հովանաւորութեան տակ գայրոյթը հակաշուրժու երկարատեւ դասընթացքներն են:

